<<Արալեզի միջնակարգ դպրոց >> ՊՈԱԿ

Զարգացման ծրագիր

2023-2028թթ

Սիրվարդ Գալստյան

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի անկախացումից հետո կրթությունը կարևորագույն գործոն է ինչպես ազգային անվտանգության ապահովման, այնպես էլ հասարակական և համայնքային բարեփոխումների իրականացման, գիտելիքահեն տնտեսության ստեղծման տեսանկյունից: Կրթության ոլորտի, մասնավորապես հանրակրթական դպրոցներում իրականացվող բարեփոխումները պետք է միտված լինեն արդյունավետ և միջազգային կրթական փորձի լավագույն չափանիշներին համապատասխան կրթական համակարգի ձևավորմանը: Տեխնոլոգիական և նորարարական արագ զարգացող աշխարհին զուգահեռ ընթացք ապահովելու համար անհրաժեշտ քայլերից է հանրակրթական դպրոցների համապատասխան մոտեցումների որդեգրումն ու իրականացումը:

Ժամանակակից աշխարհում գրեթե բոլոր բնագավառները միտված են ենթարկվելու փոփոխությունների, որոնք արագընթաց են տեղի ունենում: Դրա պատճառը գիտության և տեխնիկայի ընձեռած նոր հնարավորություններն են: Մեր նորարարական և տեխնոլոգիական դարաշրջանում այլևս խնդիր չի աշխարհի մի ծայրից կայծակնային արագությամբ գիտելիքը տեղայնացնել այլ տեղ: Այսօր անհատից մինչև պետություն միմյանց հետ հաղորդակցվում են «ցանցային համակարգով»: Հզոր են այն պետությունները, որոնք գիտելիքահեն տնտեսություն և ներուժ ունեն: Իսկ դրա հիմքում ընկած է դպրոցական կրթությունը, որը նույնպես փոխվում է՝ արձագանքելով գիտելիքի փոխանցման և տարածման արագընթաց տեմպերին ու պահանջներին: Հանրակրթության էական բարեփոխումները դառնում են անհրաժեշտ և անխուսափելի:

«Արալեզի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման 2023-2028թ թ. ծրագրի իրավական հիմքերը

- ✓ ՀՀ «Սահմանադրություն»
- ✓ «Կրթության մասին»
- ✓ «Հանրակրթության մասին»
- ✓ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքներով
- ✓ «ՀՀ աշխատանքային օրենսգիրք»
- ✓ Դպրոցի կանոնադրություն՝ օրինակելի իրավական ակտերի տեղայնացված տարբերակներով
- ✓ Ներքին իրավական ակտեր, նորմատիվ փաստաթղթեր:
- ✓ Հանրակրթության պետական չափորոշիչի ձևավորման և հաստատման կարգ

Ծրագիրը մշակելիս հաշվի եմ առել աշակերտների և ուսուցիչների կողմից արված առաջարկությունները, որոնք արվել են հարցումների ընթացքում:

Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ

Դպրոցի հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս կառավարության (այսուհետ՝ Հիմնադիր):

1. Դպրոցը հանդիսանում է «ՀՀ Արարատի մարզի Արալեզի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ (պետռեգիստրի վկայականի գրանցման համարը 51.210.00633, վկայականի

համարը 03Ա-057861, ծածկագիր 10008675):

2. Ուսումնական հաստատությունը գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ և դպրոցի կանոնադրությամբ՝ հաստատված 01.10.2021 թ., գրանցված է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արարատի տարածքային բաժնի կողմից:

3. Դպրոցի գտնվելու վայրն է՝ ՀՀ Արարատի մարզ, Վեդի համայնք, բնակավայր Արալեզ, Թումանյան 10, հեռ. 093-53-16-32:

4. Դպրոցն ունի ՀՀ զինանշանի պատկերով հայերեն անվամբ կլոր կնիք, ձևաթղթեր: Կնիքը, ձևաթղթերը և անհատական այլ միջոցներ ձևավորելիս հայերենին կարող է զուգակցվել անգլերենը և ռուսերենը:

5. Դպրոցն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ: « Արալեզի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Դպրոց) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, միջնակարգ դպրոցի ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն է:

6. Էլեկտրոնային փոստի հասցեն- aralez@schools.am

Դպրոցը հիմնվել է 1976 թվականին, մինչև այժմ գործում է որպես միջնակարգ դպրոց:

Դպրոցը ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», ՊՈԱԿ-ի մասին օրենքներով, դպրոցի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով, այլ իրավական ակտերով:

Դպրոցի սովորողների թիվը 324 է, իսկ նախակրթարանում երեխաների թիվը՝ 29:

Դպրոցում աշխատում են 50 աշխատակից, որից 37 մանկավարժ, որից 23 -ը ուսուցիչներ են, 13-ը ուսումնաօժանդակ աշխատակից: Ուսուցիչներից 3-ն ունեն 1-ին աստիճանի որակավորման տարակարգ:

Կառավարման խորհուրդը կազմված է 9 անդամից: Ծնողական խորհուրդը կազմված

է 17 անդամից: Աշակերտական խորհուրդը կազմված է 37 անդամից: Խորհրդակցական մարմիններն ունեն կանոնադրություն, աշխատանքային պլաններ, գործում են օրենքով նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում: Դպրոցը գործում է մեկ հերթով և հնգօրյա աշխատանքային ռեժիմով: Դպրոցին կից գործում է նաև նախակրթարան, որտեղ հաճախում են 29 երեխաներ:

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր

Դպրոցին վերաբերող բոլոր իրավանորմատիվային փաստաթղթերի վարումը իրականացվում է սահմանված կարգով: Անհրաժեշտության դեպքում մշակվում և գործածության մեջ են դրվում ներքին գործածության համար նախատեսված իրավական նոր ակտեր (օրինակ՝ ներքին կարգապահական կանոններ, աշխատակարգեր և այլն): Դպրոցավարությունն իրականացվում է սահմանված կարգով: Դպրոցում վարվում են նաև դպրոցի կանոնադրությանը համապատասխան մշակված ձևաթղթեր՝ ներքին դպրոցական վերահսկողություն անցկացնելու համար:

Դպրոցի կառուցվածքը

Դպրոցը տուֆակերտ շենք է, ունի 2 մասնաշենք, որից մեկը երկհարկանի է, իսկ մյուսը՝ երեք: Ունի ջեռուցման լոկալ համակարգ: Դպրոցում գործում է 23 դասասենյակ, 3 վարչական սենյակ, խորհրդակցությունների սենյակ, դահլիճ, գրադարան, մարզադահլիճ, համակարգչային կաբինետ, տնտեսվարի սենյակ, հաշվապահի սենյակ, բուժկետ, «Տաք սնունդ» ծրագրի սննդի պահեստ, զենքի պահեստ, դուրս գրված իրերի պահեստ, լաբորատորիա, ճաշարան, 6 սանհանգույց: Դպրոցն ունի ասֆալտապատ խաղահրապարակ, պտղատու ծառերի այգի, կից՝ բացօթյա մարզահրապարակ, այժմ նաև՝ բացօթյա ընթերցարան:

Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

Բյուջեի ծախսի հիմնական ուղղություններն են.

- աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ,
- կոմունալ վճարներ,
- գրասենյակային և տնտեսական ապրանքներ,
- գույքի և սարքավորումների ձեռքբերման ծախսեր
- այլ ծախսեր:

Կառավարման և խորհրդակցական մարմինները

Դպրոցը սերտորեն համագործակցում է և՛ կառավարման, և՛ խորհրդակցական մարմինների հետ. դպրոցի գործունեությունը բաց է և թափանցիկ:

Կառավարման խորհուրդը գործում է և մշտապես գործել է դպրոցի կանոնադրության և լիազոր մարմնի կողմից սահմանված կարգերով իրեն վերապահված գործառույթներին համապատասխան: Նրանց գործունեությունը միտված է դպրոցի բնականոն զարգացմանը: Խորհուրդը շահագրգիռ է դպրոցի առաջընթացի հարցում, պատրաստակամորեն աջակցում է բոլոր նախաձեռնություններին:

Մանկավարժական խորհուրդը պատշաճորեն կատարում է կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթները, հիմնականում գումարվում է բոլոր անդամների մասնակցությամբ, քննարկում է նաև զարգացման ծրագրի իրագործման հետ կապված խնդիրները, անդրադառնում է ընթացիկ հարցերին և կոլեկտիվ պատասխանատվություն կրում ընդունված որոշումների համար: Մանկավարժական կազմը համալրված է փորձառու և որակյալ կադրերով: Երեք

ուսուցիչ ունեն որակավորման առաջին աստիճանի տարակարգ, ներառական կրթության մենթոր-վերապատրաստող ուսուցիչ, « Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամին ներգրավված ուսուցիչ առաջնորդ:

Ուսուցիչներից համարյա մեծամասնությունը հմտորեն օգտվում են էլեկտրոնային կրթական ռեսուրսներից, նաև իրենք են ստեղծում դրանք: Բոլոր ուսուցիչները հիմնականում ապահովված են դրույքաչափով:

Դպրոցում գործում են հայոց լեզվի և գրականության, օտար լեզուների, հասարակագիտության, մաթեմատիկայի, տարրական կրթության և բնագիտական առարկաների մեթոդական միավորումները՝ ըստ իրենց գործառույթների:

Մանկավարժների թիվը ըստ աշխատանքային գործունեության տարիների՝

Աշխատանքային ստաժ	Մանկավարժների թիվը
Մինչև 5 տարի	12
5-10 տարի	6
10-15 տարի	4
15-20 տարի	3
20-25 տարի	2
25-30 տարի	3
30-35 տարի	5
35-40 տարի	1
40- ավելի տարի	1

Աշակերտական խորհուրդը կազմված է 37 անդամներից: Այն Արալեզի միջնակարգ դպրոցում շատ ակտիվ և տեսանելի գործունեություն է ծավալում : Դրա

փաստացի վկայությունն են բազմաբնույթ ոճի ու բովանդակության միջոցառումները, մրցույթները, հանդիպումները, ուսումնաճանաչողական այցերը:
ԱԽ-ը հանդես է գալիս մի շարք առաջարկություններով, որոնց իրագործմանը օժանդակում և խթանում է սովորողների նախաձեռնություններին դպրոցի տնօրենությունը: Հետևողական դիրքորոշում ունի ներքին կարգապահական կանոնների իրագործմանը, սովորողների արտաքին տեսքին և կեցվածքին, մեծ ուշադրություն է դարձվում կարգապահությանը: Կարևորելով աշակերտական ինքնակառավարումը՝ պարբերաբար անցկացվում են հանդիպումներ սովորողների հետ, քննարկվում և լուծում են տրվում խնդիրներին: Անչափ կարևորվում է աշակերտների կողմից բարձրացված հարցերի խոր և մասնագիտական վերլուծությունը:
Ըստ կանոնադրության՝ պարտաճանաչորեն զումարում են նիստերը հստակ օրակարգերով, վարում աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:

Ծնողական խորհուրդը մշտապես իրազեկ է և ներգրավված դպրոցի ուսումնադաստիարակչական աշխատանքներին: Ըստ կանոնադրության զումարվում են նիստերը հստակ օրակարգերով, վարում նիստերի արձանագրությունների մատյանը:

Դպրոցի համագործակցությունը համայնքի հետ

Դպրոցը համագործակցում է համայնքի հետ, աջակցում համայնքի կազմակերպած միջոցառումների՝ ազգային տոների, փառատոների, տոնակատարությունների, արշավների, քայլերթերի, հիշատակի օրերի անցկացմանը: Դպրոցի սաները մասնակցում են համայնքի մշակույթի տան կազմակերպած մշակութային պարապմունքներին ու խմբակներին: Օգտվում են գյուղի գրադարանից:

Համայնքի հետ կազմակերպվում են հանդիպումներ, շաբաթօրյակներ, կանաչապատում և ծառատունկ:

Դպրոցում ձևավորված ավանդույթներ

- Յուրաքանչյուր տարվա ձմռան վերջին օրը մանկավարժական համակազմով կազմակերպվում է ուխտագնացություն Զանգակատուն՝ Պարույր Սևակի տուն-թանգարան: Առաջին ձնծաղիկները մանկավարժները նվիրում են հայրենակից սիրելի գրողին, նրա հիմնած այգու նվեր ստացած խնձորներից բերում են դպրոց և բաշխում յուրաքանչյուր դասարանին մեկական, որը որպես նշխար ճաշակում են աշակերտները (ավանդույթն ունի շուրջ 20 տարվա շարունակականություն):

- Յուրաքանչյուր տարի դպրոցում նշվում է Հայ առաքելական եկեղեցու տաղավար և այլ ավանդական տոներ՝ Սուրբ Հարության տոնը, Համբարձման տոնը, Տյառնընդառաջը, Ծաղկազարդի տոնը, անցկացվում են տոնակատարություններ՝ որպես համադպրոցական միջոցառումներ՝ աշակերտների, մանկավարժների, ծնողների ընդգրկմամբ:

- Դպրոցի բակի տառերի պուրակը յուրաքանչյուր տարի համալրվում է շրջանավարտների կողմից մեկական տառի քանդակի տեղադրմամբ (ավանդույթն ունի 7 տարվա շարունակականություն) :

- « Հմուտ ձեռքեր » ստեղծագործական ձեռագործ աշխատանքների ամենամյա ցուցահանդես-վաճառք, որի հեղինակները տարբեր դասարանների աշակերտներն են (ավանդույթն ունի 5 տարվա շարունակականություն):

Կրթության որակի ապահովման համար տարվում են հետևյալ աշխատանքները.

- Կազմված են թեմատիկ պլաններ՝ պետական չափորոշիչներին ու ծրագրերին համապատասխան:
- Մեթոդմիավորումները վերահսկում են այդ պլանների կատարումը, դասավանդման որակը, տնային հանձնարարությունների ծավալը, թեմատիկ գրավորների տրման ժամկետներն ու բովանդակությունը:
- Պարբերաբար կատարվում են մշտադիտարկումներ, առարկաների դասավանդման դրվածքի ուսումնասիրություններ:
- Տրվում են ստուգողական գրավոր աշխատանքներ:
- Յուրաքանչյուր դասարանի աշակերտների՝ բոլոր առարկաների արդյունքների վերաբերյալ կազմվում են տեղեկագրեր:
- Աշակերտների առաջադիմության մասին զեկուցվում է դասղեկների և մեթոդմիավորումների նիստերում, քննարկվում են առաջադիմությունը, որակը, հոգեբանական և ուսուցման բովանդակության լուրջ փոփոխություններին աշակերտների հարմարեցման անհրաժեշտությունն ու ձևերը:
- Ըստ անհրաժեշտության՝ անցկացվում են դասարանական խորհրդակցություններ, քննարկվում ծագած խնդիրները, գտնում լուծման ուղիներ:

Դպրոցի գործունեությունը

Որակյալ կրթությունը պետության զարգացման կարևորագույն հիմնասյունն է: Կրթությունը լինելով հասարակության առաջընթացի առանցքային միջոց, պետք է լինի մատչելի, հասանելի և նպատակաուղղված լինի ձևավորել ազատ, արդարամիտ, հայրենասեր, գրագետ, սեփական հմտություններն ու կարողությունները գործնականում արդյունավետ կիրառող, արագ կողմնորոշվող, ճկուն և ժամանակաշրջանի մարտահրավերներին պատրաստ քաղաքացիներ: Կրթությունը կրում է դինամիկ բնույթ. մարդ անհատը անընդմեջ կրթվելու և ինքնակրթվելու անհրաժեշտություն ունի :

Հայ դպրոցի դերը մեր օրերի նոր աշխարհակարգի ձևավորման այս երկարընթաց նավավարության դժվարին ճանապարհին մեկն է՝ սովորողին պահել **հայ**, որը կլինի բազմադարյան հայ մշակույթի, հայոց քրիստոնեավանդ ժառանգության, ստեղծարար արվեստի ու արհեստի, հայոց պատմության անսպառ գիտելիքների կրողն ու ժառանգը, ինչպես նաև իր մասնագիտական որակներով և հմտություններով մրցունակ կլինի ոչ միայն **հայրենիքում** այլև՝ աշխարհում:

Կրթությունն անընդհատ վերափոխվում է, բովանդակությունը կատարելագործվում՝ մոտենալով արդի դարաշրջանի սոցիալական, քաղաքական և մանկավարժական պահանջներին: Ճգնաժամային երևույթների հաղթահարումը և առաջխաղացումը կրթության բնագավառում տեղի են ունենում հնի վերափոխման, նոր սկզբունքային մոտեցումների դրսևորման, ինչպես նաև մանկավարժությանն ու կրթությանն այլ բովանդակություն հաղորդելու միջոցով: Մեծ տեղ է հատկացվում տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրմանը կրթության բնագավառում:

Արալեզի միջնակարգ դպրոցը որդեգրել է ժամանակակից «**Հայ Դպրոցի**» կոչումը, որը նպատակ ունի նաև հասարակությանը տալ մասնագիտական պատշաճ

պատրաստվածություն ունեցող, համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված անձ:

Գյուղական միջավայրը, աշակերտների հանգիստն ու ժամանցը կազմակերպելու վայրերի բացակայությունը ոչ մի կերպ չպետք է ներազդեն անհատի լիարժեք ձևավորմանը: Դպրոցը արտադասարանական և արտադպրոցական միջոցառումների և խմբակների միջոցով պետք է հագեցնի աշակերտի նախասիրությունների, ինչպես նաև կրթական լրացուցիչ ծառայություններից օգտվելու հնարավորության շրջանակը:

Դպրոցում ստեղծել հարթակներ, որոնք մշակութային հաղորդակցության հնարավորություն կընձեռնեն՝ հաշվի առնելով դպրոցում ուսանող ազգային փոքրամասնությունների մշակույթը, դավանանքն ու կենցաղը:

Դպրոցում ձևավորել նպաստավոր միջավայր, որտեղ ի հայտ կգան և կբացահայտվեն հետազոտող և ստեղծագործող թե՛ սովորողներ, թե՛ ծնողներ, թե՛ ուսուցիչներ:

Համամարդկային ընտանիքին ինտեգրվելու և համաշխարհային քաղաքակրթությունում արժանավայել տեղ զբաղեցնելու առումով մեծ նշանակություն ունի ազգի պատմության խոր ուսումնասիրությունը, որը մեր տեսակի ծննդյան վկայականն է:

Աշխարհի զարգացած երկրների փորձը նկատի ունենալով՝ դպրոցում դասաժամային բաշխվածության առավելությունն ու առաջնահերթությունը տալ բնագիտական առարկաներին՝ դրանց խոր ուսումնասիրությունն ու ճիշտ դրվածքը գիտության զարգացման և պետության հզորացման խթան համարելով:

Որպես լրացուցիչ կրթական ծառայություն՝ ազգային պարերի և ազգային երաժշտության ուսուցումը ինտեգրել դպրոցում, որոնք հայեցի դաստիարակության բաղադրատարրերից կարևորագույններն են. երգչախմբի ստեղծումն ու գործունեությունը հոգևոր մշակույթային արժեքների պահպանման գործոնից զատ կձևավորվի նաև մատաղ սերնդի երաժշտական բարձր ճաշակը:

Դպրոցում խթանել օտար լեզուների ուսուցումը, ինտեգրել այն լեզուները, որոնք ներառված չեն դպրոցական առարկայացանկում /ֆրանսերեն, պարսկերեն,

արաբերեն, թուրքերեն, ադրբեջաներեն..../
Ուսումնահետազոտական գործունեության շրջանակները ընդլայնել և նպաստել հաղորդակցությանը այլ դպրոցների աշակերտության հետ՝ խթանելով փորձի փոխանակումը և ընդլայնելով սովորողների ճանաչողական մակարդակը:
Դպրոցում ունենալ հարթակ, որը սովորողներին հնարավորություն կտա ծանոթանալ տնտեսագիտությանն ու տնտեսվարությանը:
Ձևավորել սովորողի շարունակական կրթությունն ապահովող անձնային որակներ: Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ: Ստեղծել պայմաններ ուսումնահետազոտական գործունեության համար: Ուսումնառության ընթացքում զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողություն:
Բարենպաստ կրթական միջավայրի ապահովում յուրաքանչյուր սովորողի համար:
Հոգևոր-մշակութային և ազգային բարձր արժեքների ուսուցանում ապահովել:
Ռազմահայրենասիրական դաստիարակության պատշաճ կազմակերպում իրականացնել:
Դպրոցի նպատակն է մինչև 2028թ. դառնալ ժամանակի զարգացող պահանջներին համապատասխան դրակ ապահովող և կրթության բոլոր բնագավառներում հաջողություններ գրանցող առաջատար հանրակրթական հաստատություն ՀՀ-ում:
Եվ, քանի որ դպրոցի գլխավոր դերակատարը և կիզակետային կերպարը ուսուցիչն է, հարկավոր է ունենալ ժամանակին համընթաց քայլող ամուր ուսուցչական համակազմ՝ իրենց գիտելիքները սերունդներին փոխանցելու վեհ առաքելությամբ:

Կրթական կարիքների բավարարում

Ուսուցման և ուսումնառության արդյունավետ կազմակերպման միջոցով ձևավորել

- Համակողմանիորեն զարգացած
- Մասնագիտորեն կողմնորոշված
- Հայրենասեր
- Ազգային արժեքներ կրող

- Մարդասիրության ոգով դաստիարակված

Առկա ռեսուրսներ

- ✓ Նորագույն տեխնոլոգիաներ՝ որակյալ կրթություն ստանալու համար
- ✓ Համայնքի հետ համագործակցող, սոցիալ մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի վարկանիշ
- ✓ Աշակերտների մտավոր զարգացման պայմաններ
- ✓ Սովորողների արժեհամակարգի ձևավորում՝ ունենալով ավանդույթներով հարուստ պատմություն, առաջացնելով հետաքրքրություն նորի հարգանք անցյալի նվաճումների նկատմամբ

Ծրագրի իրականացման համար ռեսուրսներ

Մարդկային ռեսուրսներ

Առկա մասնագետների մասնագիտական որակների շարունակական բարելավում

Նյութատեխնիկական բազա

- ✓ Համակարգչային տեխնիկայի համալրում
- ✓ Ժամանակակից լաբորատոր սարքերի և սարքավորումների ձեռքբերում
- ✓ Էլեկտրոնային կրթական ռեսուրսների համալրում և դասապրոցեսում դրանց կիրառման ընդլայնում

Ֆինանսական ռեսուրսներ

Լրացուցիչ կրթական վճարովի ծառայությունների կազմակերպում

Աջակցություն համայնքի և բարեգործական կազմակերպության կողմից

2.Հաստատության գործունեության իրավիճակի վերլուծություն

Մինչ դպրոցի զարգացման ծրագրում նպատակներ և խնդիրներ սահմանելը ուսումնասիրել և բացահայտել եմ դպրոցի ուժեղ և թույլ կողմերը, վտանգները, հնարավորությունները:

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Դպրոցի շենքային պայմանները	
• Հիմնանորոգված է դպրոցը: • Ասֆալտապատված և բարեկարգված է դպրոցի բակը, խաղահրապարակը, տարածքը ցանկապատված է: • Դասասենյակները լուսավոր են: Դահլիճը, մարզադահլիճը լավ և բավարար վիճակում են: • «Տաք սնունդ» ծրագրի շրջանակում հիմնվել է ճաշարան, խոհանոց: • Առկա է համակարգչային կաբինետ: • Դպրոցի շենքերի շահագործումը համապատասխանում է շահագործման նորմատիվներին: • Պահպանվում է հակահրդեհային անվտանգությունը: • Գործում է ջեռուցման լոկալ	• Դպրոցը վերանորոգվել է 10 տարի առաջ: • Կաթսայատան տանիքը վերանորոգման կարիք ունի: • Ապաստարաններ չկան: • Դասասենյակները անբավարար քանակությամբ են: • Առարկայական կաբինետներ չկան, այդ թվում նաև՝ ֆիզիկայի և քիմիայի: • ԿԱՊԿՈՒ երեխաների համար շենքի ներսում անհրաժեշտ հարմարեցումները բացակայում են: • Մարզադահլիճը վերանորոգման կարիք ունի:

համակարգ, շուրջօրյա ջրի մատակարարման հարմարեցում, սանհանգույց:	

Դպրոցի նյութատեխնիկական բազան

• Դպրոցն ունի 20 համակարգիչ, նոութբուք 2, տպիչ և պատճենահանող սարքեր, պրոյեկտոր: • Անվճար և վճարվող ինտերնետային կապ: • Երաժշտական ուժեղացուցիչ: • Լաբորատոր սարքեր՝ պարզագույն փորձերը և բնագիտական առարկաների գործնական աշխատանքները կատարելու համար: • Տեսախցիկներ , • Ապահովված է գույքով, գրադարանը՝ դասագրքերով, գեղարվեստական և որոշ մեթոդական գրքերով, առարկայական պաստառներով, դիդակտիկ պարագաներով:	• Համակարգիչների թիվը քիչ է: • Համակարգիչների որոշ մասը մաշված է: • Լաբորատոր սարքերն ու նյութերը սակավ են, մեծամասամբ՝ հնացած: • Ոչ բավարար քանակությամբ մարզագույք: • Դպրոցի բյուջեի անբավարարություն՝ նյութատեխնիկական բազան հարստացնելու և թարմացնելու համար:

Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինները

Ծնողական խորհուրդ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• ԾԽ-ը ներգրավված և իրազեկված է ուսումնադաստիարակչական աշխատանքներին: • Համագործակցում են նաև առցանց տարբերակով: • Գումարվում են նիստերը, վարում են ծնողական խորհրդի նիստերի մատյանը: • Կազմակերպում են միջոցառումներ, այցելություններ, էքսկուրսիաներ:	• Ծնողներից ոչ բոլորն են նախաձեռնող: • Ծնողական ժողովներին մայրերն են միայն մասնակցում:

Աշակերտական խորհուրդ

• Աշակերտական խորհրդը շատ ակտիվ գործունեություն է ծավալում: • Հաճախակի կազմակերպում է միջոցառումներ, էքսկուրսիաներ, հանդիպումներ: • Հետևում է դպրոցի ներքին կարգապահական կանոնների պահպանմանը: • Հանդես են գալիս առաջարկություններով: • Ըստ կանոնադրության գումարվում են նիստերը, վարում՝ աշակերտական խորհրդի նիստերի արձանագրությունների մատյանը:	• Ժամանակի սղություն՝ աշակերտական խորհրդի անդամների շփումների համար:

Մանկավարժական համակազմ

• Դպրոցի տնօրենությունն աշխատում է ղեկավարման և կառավարման պահանջվող նկարագրով, պարտականությամբ և պատասխանատվությամբ: • Աշխատակազմը համախմբված է նպատակի և խնդիրների լուծման գործում: • Դպրոցի գործունեությունը և աշխատանքի արդյունքները բաց են ու տեսանելի: • Մանկավարժական աշխատողի թափուր տեղերն համալրվում են սահմանված կարգին համապատասխան: • Մանկավարժները երբեմն խրախուսվում և գնահատանքի են արժանանում կատարած մասնագիտական և դաստիարակչական աշխատանքների համար, ըստ այդմ՝ «Առանցքում՝ սովորողն է» կարգախոսով: • Մանկավարժները շարունակական վերապատրաստումների մասնակցության արդյունքում փորձում են ապահովել նոր չափորոշչի պահանջները՝ ակնկալվող կարողունակությունները, վերջնարդյունքները: • Տարակարգ ունեցող 3 ուսուցիչներ ունենք, ովքեր պատրաստակամ փոխանցում են իրենց փորձը: 2 ուսուցիչներ պատրաստվում են մասնակցել կամավոր ատեստավորման: • Մանկավարժներն ու ուսուցիչներն ունեն	• Տարակարգ ունեցող ուսուցիչները քիչ թիվ են կազմում: • Նորամուծությունների իրացման նկատմամբ հետաքրքրություն չունեցող մանկավարժներ կան: • Դասաժամերի ծանրաբեռնվածության պատճառով՝ փոխադարձ դասալսումները քիչ են: • ՏՀՏ-ին բոլոր մանկավարժները չեն, որ լիարժեք տիրապետում են: • Կամավոր ատեստավորման դիմած ուսուցիչներ չունենք: • Բնագիտական առարկաների գործնական և փորձարարական աշխատանքների ոչ լիարժեք կատարում՝ լաբորատոր սարքերի և նյութերի սակավության պատճառով: • Ուսուցիչների որոշ մասը դժվարանում է ուսուցումը կազմակերպել ԿԱՊԿ

համապատասխան բարձրագույն կրթության որակավորում: • Մեթոդ միավորումները համագործակցում են՝ կատարելով քննարկումներ, դասալսումներ, առաջարկություններ: • Կան նորամուծությունների իրացմանը պատրաստ առաջին և երկրորդ խմբի ուսուցիչներ: • Մասնագիտական կարողություններով օժտված ուսուցիչներ կան, տիրապետում են ժամանակակից մեթոդներին ու պահանջներին: • Մանկավարժները նոր չափորոշիչը ներդնում են ուսումնադաստիարակչական գործընթացում, սովորողների հետ արդեն իրականացնում են նախագծային աշխատանքներ: • Ներառական կրթության իրականացման ՀՄԿ –ի հետ համագործակցող վերապատրաստող-մենթոր ուսուցիչ ունենք: • Ուսումնադաստիարակչական աշխատանքներն իրականացնելիս փորձում են ապահովել աշակերտակենտրոն ուսուցման սկզբունքները:Նոր կամ ժամանակակից մեթոդները կիրառում են դասապրոցեսում: • Մանկավարժները մասնակցում են առկա և	ունեցող աշակերտների հետ: • Ուսուցիչների որոշ մասի համար ժամանակի և □կամ□ ՏՀՏ-ի անբավարարություն՝ էլեկտրոնային մատյանը դասաժամին լրացնելու: • Մանկավարժների բազմամյա փորձ ունեցողների մի մասը միտված է ուսուցման ավանդական մեթոդներին:

առցանց կրթական տարբեր ծրագրերի և հիմնադրամների կողմից իրականացվող վերապատրաստումներին: • Կազմակերպվում են առարկայական բաց դասեր, դասղեկի ժամեր՝ օգտագործելով ՏՀՏ և կրթական տարբեր տեխնոլոգիաներ: • Ուսուցչի օգնականների արդյունավետ աջակցություն՝ հատկապես ԿԱՊԿ ունեցող դասարանների դասապրոցեսի լիարժեք իրականացման համար: • Մանկավարժները սովորողների հոգևոր-բարոյական, ազգային, մշակութային դաստիարակչական ռազմավարությունն իրականացնում են նաև դասղեկի ժամերին կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումներին ու բաց դասերին: • Պարբերաբար իրականացվում են դասալսումներ, արդյունքները քննարկվում են մ.մ և մանկավարժական նիստերի ժամանակ, անհրաժեշտության դեպքում՝ տրվում մեթոդական աջակցություն: • Տնօրենի և փոխտնօրենի կողմից իրականացվում է վերապատրաստման ծրագրերի որակի մշտադիտարկում՝ ուսուցման գործընթացում նոր մեթոդների և հմտությունների կիրառությունն ապահովելու համար:	

• Դպրոցում առկա է ժողովրդական կառավարման գործելակերպ, որի հիմքում ընկած են ժողովրդավարություն, պարտականություն, իրավունք, հանդուրժողականություն, հասարակության մեջ ներառում, մասնակցություն, հավասարություն, բազմակարծիք արժեքային համակարգ, հարգանք գաղափարները: • Խրախուսվում են կրթության ոլորտին նվիրված, նորարար մանկավարժները, որոնք պոտենցիալ ունեն ուսման պրոցեսում ծավալելու մասնակցային գործունեություն՝ սովորողների մոտ զարգացնելով քննադատական, վերլուծական մտածողությունն, դիրքորոշում, վարքագիծ:	

Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Փոխհամագործակցում ենք համայնքի հետ ԿԳՄՍ նախարարություն, Արարատի մարզպետարանի, Վեդի համայնքապետարանի և Արալեզի համապատասխան ստորաբաժանումների հետ • Համագործակցում ենք Արարատի մարզի ՏՄԱԿ- հետ, ԿԶՆԱԿ հիմնադրամի, Մասնագիտական կողմնորոշման կենտրոնի, Դասավանդի՛ր, Հայաստան կրթական հիմնադրամի, «Կազա» շվեյցարական հիմնադրամի –Կարողունակությունների առցանց վերապատրաստում, Հանրային լրագրության ակումբի/ՀԼԱ/- Մեդիագրագիտության դասընթացներ, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի, ՄԱԿ-ի զարգացման ծրագիրի -«Կլիմայական արկղիկ», Education/AGBU ՀԲԸՄ կազմակերպության, «Զարթնիր » ՀԿ - կամավորական խմբակի, «Բարձունք» ՀԿ –ի, Էկո աղբ/ Eco Waste ՀԿ-ի, ԿՏԱԿ-ի, Հայ Ամերիկյան Համալսարանի ACCESS, Pativ Rbhk– բարեգործական կազմակերպության, Էլեկտրոնային կրթական ռեսուրսների armedu.am, lib.armedu.am, eschool.am,	• Ոչ բավարար ակտիվություն կա մշակույթի և սպորտային կենտրոնների հետ:

kznakhimnadram.blogspot.am, platform.gitserund.am հետ:	

Ուսումնական միջավայր

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցը բարեկարգված, լուսավոր, սովորելու համար հրապուրիչ միջավայր է: • Գրքերով ու դասագրքերով, ծրագրային նյութերով, համացանցային կապով ապահովված է: • Առկա են որոշակի քանակով լաբորատոր սարքավորումներ: • «Տաք սնունդ» -ի կազմակերպման համար բարեկարգված է ճաշարանը: • «Պատիվ» բարեգործական կազմակերպությունը որոշակի աջակցություն է ցուցաբերում դպրոցին: • Բոլոր դասասենյակները կահավորված են պահանջվող նորմերին համապատասխան: • Աշակերտական գույքը վերջին 7 տարիների ընթացքում փոխարինվել է նորով: • Դասագրքերը համալրվել է էլեկտրոնային տարբերակով:	• Առարկայական կաբինետներ չկան: • Համակարգիչների թիվը բավարար չի: • Դասասենյակները քիչ են: • ԿԱՊԿՈՒ երեխաների համար անհրաժեշտ հարմարեցումները թերի են: • Ֆիզիկայի և քիմիայի կաբինետ չկա: • Խմբակներ, լրացուցիչ կրթական ծառայություններ չկան:

• Կազմակերպվում են արտադասարանական և արտադպրոցական միջոցառումներ, էքսկուրսիաներ, այցելություններ: • Համագործակցության ծրագրերի իրականացման շնորհիվ կրթության որակը բարձրացում է, նաև նյութատեխնիկական բազան է հարստանում նվիրաբերումների միջոցով: • Ձևավորված ավանդույթները շարունակական են: • Համագործակցություն է իրականացնում «Փրոջեքթ Հարմոնի» հայկական մասնաճյուղ «Անգլերենի դասընթացներ հայաստանցի ուսուցիչների և աշակերտների համար» ծրագրի շրջանակում:	

Սովորողներ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Տարեկան առաջադիմությունը 100% • Բացակայությունների թիվը ցածր է : • Դպրոցում հավասար իրավունքներով և պայմաններով սովորում են 299 հայ և 5 եզդի երեխաներ: • Յուրաքանչյուր ոք, այդ թվում նաև ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության իրավունքի իրացման	• Որակը՝ 33 % է: • Տարրական դասարաններում ավելի բարձր է առաջադիմությունն ու որակը, քան միջին ու ավագ դասարաններում:

գործընթացը հիմնավորվում է կրթության մատչելիության, հավասար մասնակցային հնարավորության և որակի ապահովման սկզբունքների վրա: • Դպրոցում կան ընդունակություններով օժտված և շնորհալի երեխաներ, որոնք մասնակցում են սպորտային և մշակութային միջոցառումներին: • Հատկապես 5-12 դասարանների սովորողները տիրապետում են ՏՀՏ-ին: • Դպրոցում բոլոր աշակերտները ապահովված են դասագրքերով: • Սովորողների շրջանում տիրում է բարոյահոգեբանական, հանդուրժողական, հարգալից մթնոլորտ: • 2018-2022 թթ. բուհ ընդունվողների թիվը 31 է: • Ակտիվ գործունեություն է իրականացնում Աշակերտական խորհուրդը՝ մասնակցելով ուսումնադաստիարակչական բազմաբնույթ միջոցառումներին, արտադասարանական աշխատանքներին: • Իրականացվում են մասնագիտական կողմնորոշման վերաբերյալ սեմինարներ և աշխատանքներ: • Միջին և ավագ դասարանների զգալի թվով աշակերտներ մասնակցում են	• Գերազանց սովորողների մեծամասնությունը աղջիկներ են: • Նվազել է բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրությունը, այդ պատճառով օլիմպիադայի մասնակից աշակերտներ մարզային փուլում չկան: • Ընթերցասերները հիմնականում աղջիկ սովորողներն են: • Տղաների մոտ ուսման նկատմամբ մոտիվացիայի պակաս կա: • Դպրոցում խմբակներ չեն գործում:

արտադպրոցական պարապմունքներին, այդ թվում Երևանի «Թումո» կենտրոն: • Մեծ է մասնակցությունը արտադպրոցական պարապմունքներին, ծրագրավորման դասընթացներին:	

Դպրոցի բյուջեն, ֆինանսներ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
• Դպրոցը ֆինանսավորվում է պետական բյուջեից, որը իրականացվում է կանոնավոր և ժամանակին: • Այն հիմնականում բաշխվում է աշխատավարձի, գրենական, տնտեսական, կոմունալ ծախսերի վճարման համար: • Ֆինանսների ճիշտ և գրագետ բաշխում: • Բյուջեի ճիշտ պլանավորման և խնայողության հաշվին ձեռք է բերվել դպրոցական գույք, ձմռանն ապահովվել անհրաժեշտ ջերմաստիճանով:	• Չկա արտաբյուջետային միջոց: • Դպրոցի սահմանափակ ֆինանսական միջոցները բավարար չեն մեծածախս գույքի ձեռք բերման և վերանորոգման համար:

3. Նպատակների և խնդիրների սահմանումը

Նպատակ 1 . Ժամանակակից կրթական պահանջներին բավարարող ուսումնական միջավայրի ապահովում

	Գործողություն	Պատասխանատու	Ժամկետ
Խնդիր 1. Ստեղծել ուսումնական և դաստիարակչական բարենպաստ պայմաններ՝ պահպանելով սովորողների առողջությունն ու ֆիզիկական զարգացումը			
1	Դպրոցում կազմակերպել սովորողների սննդի հարցը:	Տնօրեն, տնօրենի տեղակալ	**2023-2028թթ.**
2	Մարզադահլիճը համալրել սպորտային գույքով :	Կառավարման խորհուրդ	2023-2028թթ.
3	Դպրոցի խաղահրապարակն ու բացօթյա մարզահրապարակը բարեկարգել համայնքի ու նախկին շրջանավարտների աջակցությամբ	Ծնողներ, շրջանավարտներ	2023թ.
4	Կազմակերպել շաբաթօրյակներ	Տնօրեն, տեղակալ, դասղեկներ	2023-2028թթ.
5	Կազմակերպել սպորտային միջոցառումներ՝ ընդգրկելով ԿԱՊԿՈՒ երեխաներին:	Դասղեկներ	2023-2028թթ.
6	Ուսումնական միջավայրը դարձնել հրապուրիչ և մոտիվացնող, օգտագործելով անհրաժեշտ ռեսուրսներ:	Տնօրեն	2023-2028թթ.
7	Երեխաները պետք է համոզված լինեն, որ դպրոցում	Տնօրեն,	2023-

	իրենք պաշտպանված են: Պետք է բացառել սովորողի նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնությունները, հալածանքները:	փոխտնօրեններ, ուսուցիչներ	2028թթ.
8	Պետք է մշտապես հոգ տանել երեխաների առողջության պահպանման մասին:	Տնօրեն, բուժքույր	2023-2028թթ.
Խնդիր 2. Դպրոցի բարեկարգ ֆիզիկական միջավայրի ապահովում			
1 2	Դպրոցին կից անմշակ հողամասերը կանաչապատել, կազմակերպել ծառատունկ: Բարեկարգել դպրոցի խաղահրապարակը:	Տնօրեն, ծնողական խորհուրդ	2023-2028թթ.
Խնդիր 3. Կրթական պահանջներին համապատասխան ունենալ առարկայական կաբինետներ			
1	Հնարավորության սահմաններում համալրել համակարգչային կաբինետը գույքով	Տնօրեն, «Պատիվ»-բարեգործական կազմակերպություն	2023-2028թթ.
2	Ստեղծել շախմատի կաբինետ	Տնօրեն	2023թ.
3	Բնագիտական առարկաների կաբինետներ ստեղծել	Տնօրեն, տնօրենի տեղակալ	2023-2028թթ.
4	Համամարդկային ընտանիքին ինտեգրվելու և համաշխարհային քաղաքակրթությունում արժանավայել տեղ զբաղեցնելու առումով մեծ նշանակություն տալ ազգի պատմության խորը ուսումնասիրությանը, ստեղծել պատմության	Տնօրեն,տնօրենի տեղակալ	2023-2028թթ.

	կաբինետ:		

Ակնկալվող արդյունքը-

- Սովորելու նկատմամբ շարժառիթի ստեղծում
- Շրջակա միջավայրի պահպանում և տիրապետում
- Լաբորատոր և գործնական աշխատանքների լիարժեք կատարում
- ՏՀՏ գործիքների տիրապետում
- Ֆիզիկական դաստիարակության ապահովում
- Առողջ ապրելակերպ մշակույթի ապահովում
- Համաշխարհային քաղաքակրթությանը ինտեգրում

Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

- ✓ Մարզագույք
- ✓ Ծառատունկի իրականացման համար անհրաժեշտ նյութերն ու բաղադրիչ մասերը
- ✓ Համակարգչային տեխնիկա
- ✓ Լաբորատոր սաքավորումներ
- ✓ Շախմատի կաբինետի գույք
- ✓ Քարտեզներ, պաստառներ

Ռիսկերը

- ✓ Ոչ բավարար ֆինանսական միջոցները
- ✓ «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի փոփոխության պատճառով ֆինանսական ռեսուրսների տնօրինման սահմանափակ հնարավորություն

Ռիսկերը մեղմող գործողությունները

- ✓ Աջակցություն համայնքի և բարեգործական կազմակերպության կողմից

Նպատակ 2. Մանկավարժական համակազմ

Կոմպետենտ մանկավարժի ապահովում, մանկավարժական կազմի մասնագիտական կարողությունների և որակի զարգացման որակական փոփոխության ապահովում

Խնդիր 1. Կազմակերպել ուսուցիչների ինքնազարգացմանն ուղղված աշխատանքներ			
	Գործողություն	Պատասխանատու	Ժամկետ
1.	Կազմել ինքնազարգացման պլանի ձևանմուշ մեթոդմիավորման նիստերում :	Մեթոդմիավորման նախագահ	2023-2028թթ
2.	Ինքնազարգացման աշխատանքների արդյունքում ստեղծագործական և հետաքրքրաշարժ աշխատանքները ներկայացնել ըստ կազմած ժամանակացույցի:	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մասնախմբի նախագահ	2023-2028թթ
3.	Աջակցել մանկավարժներին նյութերը մշակելու և տպագրելու համար:	Տնօրենի տեղակալ	2023-2028թթ
4	Խրախուսել և գնահատանքի արժանացնել ուսուցիչներին՝ լավագույն աշխատանքների համար:	Տնօրեն, տնօրենի տեղակալ	2023-2028թթ
4	Աջակցել ուսուցիչներին կամավոր	Տնօրեն ,տնօրենի	2023-2028

	ատեստավորման մասնակցելու համար:	տեղակալ	
5	Խթանել ուսուցիչների մասնակցությունը տարբեր մրցույթային և կատարելագործման ծրագրերին:	Տնօրեն	2023-2028թթ
6	Ապահովել փորձի փոխանակում սկսնակ և փորձառու ուսուցիչների միջև:	Տնօրենի տեղակալ	2023-2028թթ..
Խնդիր 2. Ստեղծել առարկայական կրթական պաշարներով համալրված կենտրոններ, այդ թվում՝ էլեկտրոնային			
	Գործողություն	Պատասխանատու	Ժամկետ
1.	Շարունակաբար համալրել կենտրոնը օժանդակ գրականությամբ, էլեկտրոնային պաշարներով և այլ պարագաներով:	Տնօրեն, տնօրենի տեղակալ, մմ նախագահ	2023-2028թթ.
2.	Ստեղծված էլեկտրոնային նյութերն օգտագործել դասապրոցեսներում:	Ուսուցիչներ	2023-2028թթ.
Խնդիր 3. Ապահովել ուսուցիչների համակարգչային գրագիտությունը և դրա կիրառությունը դասապրոցեսում			
1.	Ուսումնասիրել ուսուցիչների կողմից ՏՀՏ-ից օգտվելու իմացության մակարդակը:	Տնօրենի տեղակալ	2023-2028թթ.
2.	Կազմակերպել և իրականացնել դասընթացներ ՏՀՏ –ի կարողության և հմտության վերաբերյալ :	Տնօրեն	2023-2028թթ.
3.	Ստեղծել կրթական պաշարներ և	Մեթոդմիավորման	2023-2028թթ.

	հարստացնել մեթոդմիավորման ռեսուրս կենտրոնը:	անդամներ, մմ նախագահներ	

Ակնկալվող արդյունքը

- Ստեղծագործող մանկավարժի ապահովում
- «Գնահատված ուսուցչի» դերի բարձրացում
- Կամավոր ատեստավորման մասնակցության մոտիվացիա
- Մասնագիտական կարողության բարձրացում
- Ժամանակակից մեթոդների տիրապետում

Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական միջոցներ

- ✓ Մեթոդմիավորման կաբինետ համակարգչային տեխնիկայով
- ✓ Էլեկտրոնային պաշարներ
- ✓ Գրադարան՝ համալրված էլեկտրոնային գրքերով

Ռիսկերը

- ✓ Ուսուցիչների տարակարգ ստանալու և կամավոր ատեստավորման մասնակցության ցանկության բացակայություն
- ✓ Զգալի թվով ուսուցիչների նորամուծություններին ընդգրկվելու պասիվությունը

Ռիսկերը մեղմող գործողությունները

- ✓ Ուսուցիչներին ընդգրկել և մասնագիտական, և ՏՀՏ գործիքների տիրապետման վերապատրաստման դասընթացներին
- ✓ Կազմակերպել հանդիպում կամավոր ատեստավորման մասնակցած ուսուցիչների հետ

Նպատակ 3. Որակյալ ներառական կրթության ապահովում

	Գործողություն	Պատասխանատու	Ժամկետ
Խնդիր 1. ԿԱՊԿՈՒ երեխաների կրթության կազմակերպման համար ապահովել ֆիզիկական և ուսումնական միջավայրը խելացի հարմարեցումներով			
1	Կատարելագործել ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատող մանկավարժների մասնագիտական զարգացումը	Տնօրեն, տնօրենի տեղակալ, ՏՄԱԿ-ի աշխատակիցներ	2023-2028թթ
2	Ապահովել այդ երեխաներին համապատասխան անհրաժեշտ պարագաներով:	Տնօրեն, հաշվապահ	2023-2028թթ
3	Ապահովել երեխաների մասնակցությունը ուսումնադաստիարակչական, մշակութային, սպորտային և այլ միջոցառումներին:	Դասղեկներ	2023-2028թթ
4	ԱՈՒՊ-ի միջոցով հսկողություն սահմանել ներառական կրթության որակի բարձրացման ուղղությամբ:	Տնօրենի տեղակալ	2023-2028թթ

Ակնկալվող արդյունքը

- Որակյալ ներառական կրթության ապահովում

Անհրաժեշտ միջոցներ և նյութատեխնիկական պարագաները

- ✓ Զարգացնող խաղեր, փազլներ, այլ դիդակտիկ պարագաներ ԿԱՊԿՈՒ սովորողների համար
- ✓ Համապատասխան հարմարեցումներ

Ռիսկերը

- ✓ Ուսուցիչների ժամանակի սղություն ԱՈՒՊ- ի կազմման համար

Ռիսկերը մեղմող գործողությունները

- ✓ Աջակցություն ուսուցչի օգնականների կողմից

Նպատակ 4. Սովորողների որակյալ կրթական կառուցվածքի և բովանդակության վերազինում, ներդաշնակ զարգացած և պատասխանատու անձի ձևավորում

	Գործողություն	Պատասխանատու	ժամկետ
Խնդիր 1. Շնորհաշատ և ընդունակություններով օժտված սովորողներին բացահայտելու			

համար մշակել արդյունավետ մեթոդներ			
1	Հայտնաբերել օժտված երեխաներին, նրանց մղել ստեղծագործական, որոնողական աշխատանքի:	Դասղեկներ	2023-2028թթ
2	Խրախուսել ու պարգևատրել սովորողներին	Տնօրեն, տնօրենի տեղակալ	2023-2028թթ
Խնդիր2. Կրթական ծրագրերի շրջանակում ապահովել կարողունակությունների զարգացում			
1.	Սովորողների մոտ զարգացնել սովորել սովորելու կարողունակություն	Ուսուցիչներ	2023-2028թթ
2	Ծանոթացնել քննադատական մտածողության, վերլուծելու կարողության հետ:	Ուսուցիչներ	2023-2028թթ
3	Ձևավորել սովորողի շարունակական կրթությունն ապահովող անձնային որակներ:	Ուսուցիչներ	2023-2028թթ
4	Սովորողներին տալ հիմնարար գիտելիքներ:	Ուսուցիչներ	2023-2028թթ
5	Ստեղծել պայմաններ ուսումնահետազոտական գործունեության համար:	տնօրեն	2023-2028թթ
6	Զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողություն:	Դասղեկներ, ուսուցիչներ	2023-2028թթ
7	Զարգացնել ինքնուրույն գործունեության կարողություն:	Դասղեկներ, ուսուցիչներ	2023-2028թթ
Խնդիր 2. Իրացնել սովորողների ուսուցման և դաստիարակության իրավունքը			

հանրակրթական չափորոշչին համապատասխան			
1.	Ուսուցումը կազմակերպել օգտագործելով ժամանակակից լավագույն մեթոդներ:	Ուսուցիչներ	2023-2028թթ
2	Պատրաստել մրցունակ շրջանավարտներ ժամանակակից աշխարհի պահանջներին համապատասխան:	Ուսուցիչներ, տնօրեն	2023-2028թթ
3	Սովորողների մոտ սեր առաջացնել կրթության նկատմամբ՝ որպես բարեկեցիկ կյանքով ապրելու ուղի:	Ուսուցիչներ	2023-2028թթ
4	Ուսուցման հետ զուգահեռ կազմակերպել հումանիստական, ազգային-բարոյական, մշակութային, հայրենասիրական, քրիստոնեական, ֆիզիկական, աշխատանքային դաստիարակություն:	Դասղեկներ	2023-2028թթ
5	Ուսուցումը կազմակերպել և միջոցներ ձեռնարկել նպաստելու սովորողների մոտ արժեքային համակարգի ձևավորման և զարգացման համար:	Ուսուցիչներ	2023-2028թթ
Խնդիր 3. Նոր մեթոդների, ծրագրերի իրականացում			
1.	Ուսուցումը կազմակերպել՝ օգտագործելով էլեկտրոնային կրթական պաշարներ	Ուսուցիչներ, օպերատոր	2023-2028թթ
2	Ըստ անհրաժեշտության կազմակերպել հեռավար ուսուցում: Անհրաժեշտության	Ուսուցիչներ, տնօրեն	2023-2028թթ

	դեպքում դասերը վարել MS Teams կրթական հարթակի մրջոցով:		
3	Իրականացնել Հայ Կրթական Հիմնարկության համագործակցային «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ՝ դպրոցներում ծրագիրը մեր դպրոցում:	Տնօրեն, բնագիտական առարկայի ուսուցիչ:	2023-2028թթ
4	Առաջիկայում փորձել համագործակցել «Թումո» կենտրոնի հետ:	Տնօրեն	2023-2028

Ակնկալվող արդյունքը

- Տաղանդավոր և շնորհաշատ երեխաների բացահայտում
- Ինքնուրույն գործունեություն ծավալելու ձեռքբերում
- Որակյալ կրթության ապահովում
- Քննադատական մտածողության և վերլուծելու կարողության զարգացում
- Փափուկ հմտությունների ձեռք բերում
- Բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրության առաջացում
- Համակողմանիորեն զարգացած անձի ձևավորում
- Արժեհամակարգի ձևավորում
- Սովորելու ցանկություն, ձգտում
- Մարդասիրական և ազգային արժեքներ կրող անձի ձևավորում
- Ապագա մասնագիտության ճիշտ կողմնորոշում և ընտրություն
- Ծանոթացում ինովացիոն տեխնոլոգիաների հետ

Անհրաժեշտ միջոցները և նյութատեխնիկական պարագաները

- Ուսումնական միջավայրում առկա միջոցներ, էլեկտրոնային կրթական պաշարների հարուստ բազա
- Դասասենյակ, աշակերտական գույք, ֆինանսական միջոցներ
- Մարդկային ռեսուրսներ

Ռիսկերը

- Սովորողների պասիվությունը

Ռիսկերը մեղմող գործողությունները

- Կազմակերպել հանդիպումներ տարբեր ոլորտներում հաջողություններ ձեռք բերած շրջանավարտների, սաների հետ:

Նպատակ 5. Կառավարման և խորհրդակցական մարմինների դերի բարձրացում

	Գործողություն	Պատասխանատու	Ժամկետ
Խնդիր 1. Բարձրացնել դպրոցի կոլեգիալ կառավարման խորհրդի դերը դպրոցի հետ համագործակցության աշխատանքներում			
1.	Լիազորության և իրավունքների սահմաններում ապահովել խորհրդի անդամների մասնակցությունը դպրոցի կրթական ծրագրերին, միջոցառումներին, կանոններին:	Կառավարման խորհուրդ, տնօրեն, ծնողական խորհուրդ	2023-2028թթ
2.	Լիազոր մարմնին ներկայացնել առաջարկություններ դպրոցի գործունեության բնագավառին, նպատակներին, խնդիրներին	Կառավարման խորհուրդ	2023-2028թթ

	համապատասխան:		
3.	Քննարկել ներքին և արտաքին գնահատման արդյունքները:	Տնօրեն	2023-2028թթ
Խնդիր 2. Լիովին կիրառել մանկավարժական խորհրդի լիազորությունները			
1.	Անհրաժեշտության դեպքում սովորողներին անմիջականորեն վերաբերող հարցերի քննարկման ժամանակ հրավիրել ծնողական և աշակերտական խորհրդի անդամներ:	Տնօրենություն, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ	2023-2028թթ
2	Խրախուսել և գնահատել ուսուցիչների կատարած աշխատանքը ըստ անվանակարգության:	Տնօրեն	2023-2028թթ
3.	Համապատասխան դասարաններում պարապող ուսուցիչներին ապահովել մասնակցություն ՀՊՉ-ի վերաբերյալ կազմակերպվող վերապատրաստումներին	Տնօրեն, օպերատոր	2023թ
4.	Մասնակցել նախագծային աշխատանքների կատարմանը	Ուսուցիչներ	2023-2028թթ
5.	Ներդնել նոր չափորոշչով սովորողների գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչները	Ուսուցիչներ	2023-2028թթ
6	Ապահովել ուսուցիչների մասնակցությունը ծրագրերի, դասագրքերի ստեղծման, դրանց համապատասխանության գնահատման համար:	Տնօրեն, ուսուցիչներ	2023թ

7	Մեթոդական միավորումների աշխատանքները պլանավորել՝ աջակցելով ուսուցիչների ատեստավորմանը նախապատրաստվելուն:	Մեթոդմիավորման նախագահներ	2023-2028թթ
8	Ակտիվացնել օլիմպիադաների, առարկայական մրցույթների, վիկտորինաների կազմակերպումը	Տնօրեն, տեղակալ, մ/միավորումներ	2023-2028թթ
Խնդիր 3. Ակտիվացնել ծնողական խորհրդի դերը դպրոցի հետ համագործակցության արդյունքում			
1.	Աջակցել դպրոցին ԿԱՊԿՈՒ սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայության կազմակերպման հարցում	Ծնողական խորհուրդ	2023-2028թթ
2.	Համագործակցության արդյունքում բարելավել սովորողների ուսուցման և դաստիարակության համար անհրաժեշտ պայմանների ստեղծմանը, աջակցել դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացմանը, այդ գործում ներգրավելով նաև հովանավորների:	Տնօրեն, ծնողական խորհուրդ	2023-2028թթ
3.	Շարունակել ծնողների ներգրավվածությունը արտադասարանական և արտադպրոցական աշխատանքներին:	Ծնողական խորհուրդ	2023-2028թթ
4.	Շարունակել համատեղ կազմակերպելու բազմաբնույթ միջոցառումները:	Ծնողական խորհուրդ	2023-2028թթ
5	Ծնողներին ծանոթացնել իրենց իրավունքներին, պարտականություններին և օրենքով	Տնօրեն, տնօրենի տեղակալ	2023-2028թթ

	սահմանված պատասխանատվությանը:		
6	Ծնողական խորհրդի նիստում հանդես գալ առաջարկություններով և իրականացնել նախաձեռնությունները:	Տնօրեն, ծնողական խորհուրդ	2023-2028թթ
7	Ծնող դպրոց կապը ամրապնդելու համար կազմակերպել սեմինարներ, այդ թվում նաև առցանց:	Դասղեկներ	2023-2028թթ
8	Դպրոցում երկարօրյա խմբերի կազմակերպում	Տնօրեն	2023-2028թթ
Խնդիր 4. Աշակերտական խորհրդի գործունեության ակտիվացում			
1	Ակտիվացնել ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված աշակերտական խորհրդի գործունեությունը:	Տնօրենի տեղակալ, աշակերտական խորհուրդ	2023-2028թթ
2	Շարունակական ընթացք տալ կազմակերպվող բազմաբնույթ միջոցառումներին, ազգային տոնակատարություններին, բանավեճերին, մրցույթներին:	Աշակերտական խորհուրդ	2023-2028թթ
3	Ամրապնդել աշակերտական խորհրդի կապը համայնքի հետ:	Աշակերտական խորհուրդ	2023-2028թթ
Խնդիր 5. Զևավորել շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդ			
1	Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման նպատակով	Տնօրենություն	2023-

	ձևավորել շրջանավարտների և հոգաբարձուների խորհուրդ:		2028թթ
2	Խորհրդի կազմում ընդգրկել առավել շահագրգիռ անձանց:	Կառավարման խորհուրդ	2023-2028թթ
3	Խորհրդի անդամներին ներգրավել դպրոցի նյութատեխնիկական բազայի հարստացմանը:	Կառավարման խորհուրդ	2023-2028թթ
4.	Կազմակերպել բարեգործական, ներդրումային աշխատանքներ:	Բարերարներ, նախկին շրջանավարտներ	2023-2028թթ

Ակնկալվող արդյունքը

- Դպրոցի հեղինակության և դերի բարձրացում
- Մանկավարժահոգեբանական ծառայությունների օպտիմալ պայմանների ստեղծում
- Ծնողների մասնակցության ակտիվացում դպրոցի աշխատանքներում:
- Դպրոցում հասարակական կազմակերպությունների դերի բարձրացում:
- Սովորողների ինքնակառավարման աշխատանքների և կամավորական ակցիաների մասնակցության աճ:

Ռիսկերը

- ✓ Ոչ բավարար ֆինանսական միջոցները
- ✓ Ոչ բոլոր ծնողների և շրջանավարտների ներգրավվածությունը

Ռիսկերը մեղմող գործողությունները

- ✓ Ներգրավել առավել ակտիվ մասնակիցներին

- ✓ Լուսաբանել դպրոցի առօրյան, ձեռքերումները, խնդիրները
- ✓ Ընդունել բարեգործական աջակցությունները

Նպատակ 6. Բյուջե ֆինանսներ

Դպրոցի զարգացումը ենթադրում է ֆինանսական ծախսեր:Դպրոցի ֆինանսավորումը սահմանափակ է:Այն բավականացնում է հիմնականում աշխատավարձերի ,կոմունալ, գրենական , տնտեսական ծախսերի վճարմանը:

Խնդիր---Ձեռնարկատիրական գործունեության ծավալում:

Գործողություն---1.Լրացուցիչ հանրակրթական ծրագրերի իրականացում:

2.Արտադպրոցական գործունեության կազմակերպում:

3.Երկարօրյա ուսուցման կազմակերպում:

4.Նախկին շրջանվարտների և բարեգործների ներգրավում աշխատանքներին:

Ծրագրի ակնկալվող արդյունքները

- Ապահովել ժամանակակից կրթության որակը, ժամանակակից կրթության արդյունքներին համապատասխան:
- Դպրոցի դինամիկ զարգացման ապահովում ՀՀ կրթության ռազմավարական նպատակային զարգացմանը համապատասխան:
- Դպրոցի դրական իմիջի ստեղծում սոցիալական շրջապատում ի հաշիվ արդյունավետ կրթության և ինովացիոն ակտիվության:
- Դաստիարակել զարգացած և սոցիալապես պատասխանատու անձնավորություն ի հաշիվ հայկական հասարակության հոգեբանական, բարոյական արժեքների, ինչպես նաև ազգային և կուլտուրական ավանդույթների:

- Կրթության ռազմավարական զարգացումը ապահովում է , որ սովորողները զբաղվեն ինքնակրթությամբ, ինքնազարգացմամբ, հետազոտական և նախագծային ծրագրով աշխատելու կարողությամբ:
- Ձևավորել ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված, արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ այնպիսի կրթական համակարգ, որը յուրաքանչյուրին կյանքի բոլոր փուլերում հնարավորություն կտա ստանալու կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն:
- Ապահովում է շրջանավարտների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը և ակտիվ քաղաքացիական դիրքորոշումները:
- Ապահովել խորը և որակյալ ուսում՝ նոր սարքավորումների, կրթական միջավայրի վերազինման, դպրոցի նյութատեխնիկական բազայի համալրման, նոր թվային սարքավորումների, լաբորատորիայի, ինտերակտիվ գրատախտակների և այլ սարքավորումների ձեռք բերում:
- Ստեղծել պայմաններ սովորողների բարոյահոգեբանական դաստիարակության համար:
- Մասնակցել կամավորական շարժման , և խրախուսել տաղանդավոր ու շնորհալի սովորողներն:
- Դպրոցում բացառել հոգեբանական և ֆիզիկական բռնությունը, հալածանքը:
- Ապահովել անհատների հարմոնիկ դաստիարակության զարգացումը , ապահովել նրանց հավելյալ կրթությունը ի հաշիվ ժամանակակից կրթության, երկարօրյա խմբերի, խմբակների ստեղծման:
- Ապահովել մանկավարժների մասնագիտական զարգացումը ի հաշիվ պետական և այլ ծրագրերի:
- Ստեղծել պայմաններ ծնողների կոմպետենտությունը բարձրացնելու և դպրոցի հետ բարձր մակարդակով համագործակցելու համար:

Արդյունքների գնահատման չափանիշները

Դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորումն իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Որպես գնահատման գործիք պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները: Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշներն անհրաժեշտ են ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունների ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

Տարեկան աշխատանքային պլանով սահմանվում են անելիքների **առաջնահերթությունները**: Ծրագրի իրատեսությունը և նրա արդյունավետության վերաբերյալ վերլուծությունները դրվում են խորհրդակցական մարմինների քննարկմանը և **գնահատմանը**:

Դպրոցի զարգացման առաջնահերթությունները

- Ստեղծել համակարգային համագործակցության մեխանիզմ, որը կօգնի ապագա մասնագիտության ընտրության, ինչպես նաև բուհ ընդունվելու պատրաստության համար:
- Ավելացնել սովորողների հնարավորությունները բազմապրոֆիլ կրթական ընդհանուր ծրագրերի հաշվին:
- Կատարելագործել կրթության որակի մոդելի ղեկավարումը:
- Կատարելագործել համակարգային աշխատանքը, որը կբերի տաղանդավոր սովորողների զարգացմանը ի հաշիվ թվային կենտրոնների ստեղծման:

- Ավելացնել գործընկերային կապերը կազմակերպությունների հետ ի շահ դպրոցի զարգացման:
- Ստեղծել պահանջված դաստիարակչական համակարգ, որի միջոցով հնարավոր կլինի իրականացնել ժամանակակից կրթության պրոցեսը:
- Ստեղծել պայմաններ կրթության մրցակցության, ի հաշիվ կրթական ծրագրերի տեխնոլոգիական դասավանդման և բովանդակության նորացման:
- Մշտապես ապահովել մանկավարժական կադրերի զարգացումը ի հաշիվ պետական ծրագրերի:
- Դպրոցի զարգացման կարգախոսը հետևյալն է «Պահպանելով ավանդույթները, քայլենք դեպի ապագան»:

Դպրոցի կրթական գործընթացի և ուսումնադաստիարակչական աշխատանքների վերահսկում

Խնդիր 1. Վերահսկել բոլոր օղակներում աշխատանքային պլանների ժամանակին կատարումը			
	Գործողություն	Պատասխանատու	Ժամկետ
1	Վերահսկել մեթոդմիավորումների, դասղեկների, մանկավարժական աշխատողների, տնօրենի տեղակալի աշխատանքային պլանների ժամանակին կատարումը	Տնօրեն, տեղակալ	2023-2028թթ.
2.	Իրականացնել վերահսկողություն էլեկտրոնային մատյանների, հաճախումների, ներքին կարգապահական կանոնների նկատմամբ	Տնօրեն, տեղակալ, օպերատոր	2023-2028թթ.
Խնդիր 2. Վերահսկել մանկավարժների աշխատանքը			

1.	Կատարել մանկավարժական աշխատանքի վերլուծություն ըստ պաշտոնի նկարագրի:	Տնօրեն, տեղակալ	2023-2028թթ.
2.	Կատարել մշտադիտարկում մանկավարժների մասնակցությունը մասնախմբի աշխատանքներին, միջոցառումներին:	Տնօրեն, տեղակալ	2023-2028թթ.
3.	Ստուգել առարկայական ծրագրերի կատարողականը:	Տնօրեն, տեղակալ	2023-2028թթ.
4.	Վերահսկողության արդյունքները քննարկել մանկավարժական խորհրդի նիստերում:	Տնօրեն,տեղակալ	2023-2028թթ.
Խնդիր 3. Վերահսկել սովորողների կողմից կրթական գործընթացի կատարումը			
1	Ուսումնասիրել սովորողների ընդգրկվածությունը ուսումնական գործընթացում:	Տնօրեն, տեղակալ	2023-2028թթ.
2	Վերահսկել ֆիզիկական զարգացման և առողջ ապրելակերպի հմտությունների պահպանումը:	Տնօրեն, տեղակալ	2023-2028թթ.
3.	Ուսումնասիրել ուսուցիչների և սովորողների համագործակցությունը:	Տնօրեն,տեղակալ	2023-2028թթ.
4.	Ուսումնասիրել գիտելիքների, հմտությունների, կարողությունների տիրապետման մակարդակը:	Տնօրեն,տեղակալ	2023-2023թթ.
5.	Լուծում տալ վերահսկողության արդյունքում արձանագրված խնդիրներին:	Տնօրեն	2023-2028թթ.

Ակնկալվող արդյունքը

- Կրթության որակի բարելավում
- Պատասխանատվության զգացումի բարձրացում
- Կարգապահական մտածողության ձևավորում
- Առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում
- Համագործակցային և թիմային աշխատանքի ձևավորում

Ռիսկերը

- Ուսուցիչների դասաժամերով ծանրաբեռնվածությունը

Ռիսկերը մեղմող գործողություններ

- Համագործակցել էլեկտրոնային և սոցիալական հարթակներում

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին իրազեկում

Խնդիր 1. Ապահովել մանկավարժների մասնակցությունը օրինակելի իրավական ակտերում փոփոխություն անելիս և նախագծերում քննարկումներ ներկայացնելիս			
1.	Լուսաբանել իրավական ակտերը:	Տնօրեն	2023-2028թթ.
2	Ներկայացնել հանրային քննարկման ներկայացրած ակտերը:	Տնօրեն	2023-2028թթ.

3.	Համալրել ներդպրոցական վերահսկողության էլեկտրոնային գործիքակազմը:	Տնօրեն, օպերատոր	2023-2028թթ.

Ակնկալվող արդյունքը

- Իրազեկված, նկարագրին համապատասխան մանկավարժ

Ռիսկերը

- ✓ Քննարկումների մասնակից ուսուցիչների պասիվություն

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

2023-2028 թթ. Արալեզի միջնակարգ դպրոցի զարգացման ծրագիրը կազմվել է՝ հիմքում ունենալով հիմնադրումից մինչև այժմ իրականացված ուսումնական գործունեության վերլուծությունների, ինչպես նաև տարբեր շահառու խմբերի՝ աշակերտների, մանկավարժների և ծնողների կարծիքների, առաջարկությունների ուսումնասիրության արդյունքները:

Ծրագրի բոլոր առանցքային դրույթները նախատեսվածի պես և սահմանված ժամանակահատվածում կյանքի կոչելը կդառնա դպրոցի նպատակային ձեռքբերումների շղթան, որի շնորհիվ դպրոցը կհամալրի բարձր վարկանիշ ունեցող և մրցունակ դպրոցների շարքը՝ դառնալով առաջատարներից մեկը:

Ծրագրի լիարժեք իրականացման տեսլականը, անշուշտ, խարսխվում է տնօրենության, վարչական աշխատակազմի, մանկավարժական համակազմի, ծնողական և աշակերտական օղակների համագործակցային աշխատանքի ու ջանքերի, համատեղ որոշումների կայացման և իրագործման վրա:

Ի վերջո, լավագույն նորի ձևավորման գործընթացը իրականանում է հնի փորձառության որդեգրման, ժամանակի պահանջներին համապատասխանեցման, սեփական արժեքային համակարգին և սկզբունքներին հավատարիմ մնալու ճկուն ռազմավարության արդյունքում:

Բովանդակություն

1.Ներածություն----------2

2.<<Արալեզի միջնակարգ դպրոց >>ՊՈԱԿ-ի 2023-2028թթ. Զարգացման ծրագրի իրավական հիմքերը----------3

3.Դպրոցի մասին ընդհանուր տեղեկություններ----------3-4

4.Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտեր----------5

5.Դպրոցի կառուցվածքը----------5

6.Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը----------6

7.Կառավարման և խորհրդակցական մարմինները ----------6

8.Դպրոցում ձևավորված ավանդույթներ----------9

9.Դպրոցի գործունեությունը----------11

10.Կրթական կարիքների բավարարում----------13

11.Հաստատության գործունեության իրավիճակի վերլուծություն----------15

12.Նպատակների և խնդիրների սահմանումը----------27

13.Ծրագրի ակնկալվող արդյունքները----------43

14.Արդյունքների գնահատման չափանիշները----------45

15.Դպրոցի զարգացման առաջնահերթությունները----------45

16.Դպրոցի կրթական գործընթացի և ուսումնադաստիարակչական աշխատանքների վերահսկում----------46

17.Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերին իրազեկում---48

18.Եզրափակում----------50